

23

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

2019

Luys



Lnyu®



SIGMA

Creating Change Together

REPORT

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ
ԱՐԵՎԵԼՅԱՆ
ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԱՍՈՑԱՅՎԱԾ ԵՐԿՐՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅԱՑԱԾՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԴՐՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱԾ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅԱՑԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԴՐՈՒՄԸ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	1
1. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ.....	2
2. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ.....	3
3. ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱԴՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ.....	8
4. ՀԱՇՎԵՏՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	11
5. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՈՒՄ.....	13
6. ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ՝ ՆԵՐԱՌՅԱԼ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԻԴԻՏԸ.....	16
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	17
ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ.....	19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) և ԵՄ-ի նախաձեռնությամբ 2019թ. մարտին SIGMA-ն՝ Եվրոպական Հանձնաժողովի հետ համագործակցությամբ հրապարակել է Հայաստանի վերաբերյալ «Ելակետային չափման հաշվետվություն. պետական կառավարման սկզբունքները» վերնագրով վերլուծությունը, որը հատուկ մեթոդաբանությամբ վերլուծել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման վեց հիմնական ոլորտները, տվել այդ ոլորտների վերաբերյալ գնահատականներ:

Այդ վեց հիմնական ոլորտներն են՝

- 1) պետական կառավարման բարեփոխումների ռազմավարական շրջանակ,
- 2) քաղաքականության մշակում և համակարգում,
- 3) պետական ծառայություն և կադրերի կառավարում,
- 4) հաշվետվողականություն,
- 5) ծառայությունների մատուցում,
- 6) պետական ֆինանսների կառավարում՝ ներառյալ պետական գնումները և արտաքին աուդիտը:

Հատկանշական է, որ այս վերլուծությունը SIGMA-ին պատվիրվել է դեռևս 2017թ. աշնանը՝ ՀՀ կառավարության և ԵՄ-ի նախաձեռնությամբ: 2018թ. աշնանը Հայաստան է ժամանել կազմակերպության փաստահավաք առաքելությունը: Հաշվետվությունը ընդգրկում է 2017թ. հունվարից 2018թ. դեկտեմբերն ընկած ժամանակաշրջանը: Վերլուծությունը թույլ է տալիս հասկանալ Հայաստանում պետական կառավարման համակարգի կայացածության մակարդակը և վեր հանել առկա թերությունները: Հաշվետվությունում արտացոլված գնահատականները կարևոր են հատկապես Հայաստանում վերջին շրջանում բարձրացված աղմուկի համատեքստում, ըստ որի՝ իբր ներկայիս իշխանությունները ժառանգել են «ծախողված պետական կառավարման համակարգ», և մեծ մասամբ մինչև 2018թ. իշխանափոխությունը Հայաստանում առկա չեն եղել կայացած պետական ինստիտուտներ:

SIGMA-ն նման բովանդակությամբ հաշվետվություններ նախկինում կազմել է նաև ԵՄ Արևելյան գործընկերության ծրագրի մասնակից այլ երկրների, մասնավորապես՝ Վրաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի մասին, թեև այդ վերլուծությունների մեթոդաբանությունը վերջին տարիներին կառույցը ավելի է զարգացրել: Հայաստանի վերաբերյալ զեկույցը ավելի համընդգրկուն է: Այդ երկրների մասին հրապարակումները եղել են ավելի շուտ՝ Վրաստանի մասով 2018թ. մայիսին,

Ուկրաինայի մասով՝ 2018թ. հունիսին, Մոլդովայի մասով՝ 2015թ. դեկտեմբերին: Վրաստանի մասին վերլուծությունը միայն երկրորդ ոլորտին է վերաբերում՝ «քաղաքականության մշակում և համակարգում»: Մոլդովայի վերաբերյալ գեկույցը մի փոքր այլ մեթոդաբանությամբ է կազմված: Ավելի համեմատելի են Հայաստանի և Ուկրաինայի վերաբերյալ գեկույցները:

Հասկանալու համար, թե որքանով է կայացած Հայաստանի պետական կառավարման համակարգը՝ փորձենք Հայաստանի և այդ երկրների մասին հաշվետվությունների համեմատական վերլուծություն իրականացնել: Առանձնացնենք այն բոլոր ոլորտները, որոնցում ըստ միջազգային հեղինակավոր գեկույցի գնահատականների՝ Հայաստանը համեմատության մեջ գտնվող մյուս երկրների նկատմամբ առավելություն ունի կամ գտնվում է համարժեք մակարդակում: Ընդհանուր առմամբ՝ համեմատության մեջ դրված շուրջ 200 ոլորտներից ավելի քան 60-ում Հայաստանին ավելի բարձր գնահատականներ են տրվել: Մնացած ոլորտներում հիմնականում Հայաստանի գնահատականները համադրելի են համեմատության մեջ գտնվող մյուս երկրների գնահատականների հետ: Իհարկե, կան ոլորտներ, որտեղ Հայաստանի պետական կառավարման համակարգին տրված գնահատականները ավելի ցածր են, սակայն դրանք մեծամասնություն չեն կազմում:

1. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Այս ոլորտներում հնարավոր է համադրել Ուկրաինայի և Հայաստանի վերաբերյալ գնահատականները: Այսպես, Հայաստանը Ուկրաինայից ավելի բարձր գնահատականներ է ստացել հետևյալ ուղղություններով.

Պետական կառավարման բարեփոխումների վերաբերյալ մշակվող փաստաթղթերի տրամաբանական լինելը՝ Հայաստանին տրվել է 4 հնարավորից 2 գնահատականը, Ուկրաինային՝ 0:

Պետական կառավարման բարեփոխումների համակարգման մեխանիզմները՝ Հայաստանին տրվել է 10 հնարավորից 6 գնահատականը, Ուկրաինային՝ 4:

Այսպիսով, պետական կառավարման համակարգի բարեփոխումների շրջանակը փաստաթղթերի տրամաբանական լինելու և բարեփոխումների մեխանիզմների տեսանկյունից ՀՀ-ում գտնվում է ավելի լավ վիճակում, քան Ուկրաինայում: Այսինքն՝ Հայաստանում առկա են պետական կառավարման համակարգը բարեփոխելու

տրամաբանական փաստաթղթեր: Միաժամանակ, Հայաստանում ավելի կայացած են այդ բարեփոխումների համակարգման մեխանիզմները:

2. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Այս ոլորտներում հնարավոր է համադրել Հայաստանի, Ուկրաինայի, Վրաստանի վերաբերյալ գնահատականները: Հայաստանը՝ Ուկրաինայի և Վրաստանի համեմատությամբ, ավելի բարձր գնահատականներ է ստացել հետևյալ ուղղություններով.

Քաղաքականության մշակման որակը

Քաղաքականության մշակման օրենսդրական շրջանակի համարժեքությունը՝ Հայաստանին տրվել է 6 հնարավորից 6 գնահատականը, Ուկրաինային և Վրաստանին՝ 7 հնարավորից 4-ը:

Օրենսդրական ծրագրերում առաջադրված պլանավորված պարտավորությունները՝ Հայաստանին տրվել է 4 հնարավորից 4 գնահատականը, Ուկրաինային՝ 2, Վրաստանին՝ 1:

Ծրագրավորված ոլորտային ռազմավարությունների իրականացումը՝ Հայաստանին տրվել է 4 հնարավորից 4 գնահատականը, Ուկրաինային՝ 1, Վրաստանին՝ 0:

Քաղաքականության մշակման որակի տեսանկյունից Հայաստանում ավելի լավ վիճակում է գտնվում օրենսդրական շրջանակը, այդ քաղաքականությունը ավելի լավ է արտացոլված օրենսդրական ծրագրերում, ինչպես նաև ավելի լավ են իրականացվում մշակված քաղաքականության ոլորտային ռազմավարությունները:

Կառավարության մոնիթորինգի և հաշվետվողականության որակը

Մոնիթորինգի և հաշվետվողականության օրենսդրական շրջանակի համարժեքությունը՝ Հայաստանին տրվել է 8 հնարավորից 8 գնահատականը, Ուկրաինային՝ 6, Վրաստանին՝ 2:

Փաստաթղթերի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման (գեկուցման) որակը՝ Հայաստանին տրվել է 12 հնարավորից 6 գնահատականը, Ուկրաինային՝ 4, Վրաստանին՝ 4:

Այսինքն՝ վարվող քաղաքականության վերաբերյալ կառավարության կողմից իրականացվող մոնիթորինգի և հաշվետվողականության տեսանկյունից Հայաստանում ավելի համարժեք է դրա համար անհրաժեշտ օրենսդրական շրջանակը, ինչպես նաև ավելի բարձր է հաշվետվությունների ներկայացման որակը: Սա խոսում է վարվող քաղաքականության նկատմամբ իշխանությունների որդեգրած ավելի թափանցիկ գործելաոճի մասին:

Կառավարության կողմից որոշումների կայացման թափանցիկությունը և իրավական համապատասխանությունը

Կառավարության նիստերի ընթացակարգերի օրենսդրական դաշտի համարժեքությունը՝ Հայաստանին տրվել է 5 հնարավորից 5 գնահատականը, Ուկրաինային՝ 4, Վրաստանին՝ 4:

Նախարարությունների կողմից կառավարության հերթական նիստին օրակարգային հարցերը ժամանակին ներկայացնելու պրակտիկան՝ Հայաստանին տրվել է 3 հնարավորից 3 գնահատականը, Ուկրաինային՝ 0, Վրաստանին՝ 0:

Կառավարության կողմից որոշումների կայացման գործընթացի թափանցիկությունը՝ Հայաստանին տրվել է 4 հնարավորից 4 գնահատականը, Ուկրաինային՝ 4, Վրաստանին՝ 3:

Կառավարության կողմից որոշումների կայացման թափանցիկության և իրավական համապատասխանության տեսանկյունից Հայաստանում ավելի համարժեք են կառավարության նիստերի ընթացակարգի օրենսդրական կարգավորումները: Նախարարությունների կողմից կառավարության նիստի օրակարգային հարցերը՝ ի տարբերություն Վրաստանում և Ուկրաինայում առկա պրակտիկայի, Հայաստանում ներկայացվում են ժամանակին: Թեև պետք է նշել, որ վերջին շրջանում այս ուղղությամբ ՀՀ կառավարության գործելաոճում որոշ խնդիրներ են նկատվում, մասնավորապես՝ հաճախ են դեպքերը, երբ կառավարության նիստի օրակարգային հարցերը՝ հակառակ օրենսդրության պահանջի, հրապարակվում են նիստից թույլենալով առաջ: Կառավարության որոշումների կայացման թափանցիկության տեսանկյունից Հայաստանում վիճակն ավելի լավ է, քան Վրաստանում:

Կառավարության կողմից իրականացվող քաղաքականության նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունը

Կառավարության և խորհրդարանի միջև որոշումների կայացման գործընթացի համակարգումը՝ Հայաստանին տրվել է 2 հնարավորից 2 գնահատականը, Ուկրաինային և Վրաստանին՝ 1:

Սա նշանակում է, որ Հայաստանում կառավարությունը քաղաքական որոշումները կայացնում է խորհրդարանի հետ ավելի սերտ համագործակցության արդյունքում, հետևաբար խորհրդարանի դերակատարությունը որոշումների կայացման գործընթացում՝ խորհրդարանական վերահսկողությունը, ավելի մեծ է:

Մշակված քաղաքականության իրականացմանն աջակցող գործընթացի կազմակերպման համարժեքությունը

Արդյունավետ քաղաքականության մշակման համար կարգավորումների շրջանակի համարժեքությունը՝ Հայաստանին տրվել է 4 հնարավորից 4 գնահատականը, Ուկրաինային՝ 3, Վրաստանին՝ 1:

Քաղաքականության մշակման գործընթացի համարժեքությունը նախարարական մակարդակում՝ Հայաստանին տրվել է 6 հնարավորից 4 գնահատականը, Ուկրաինային՝ 2, Վրաստանին՝ 0:

Արդյունավետ քաղաքականության մշակման և իրականացման համար Հայաստանում առկա են անհրաժեշտ կարգավորումներ, իսկ նախարարական մակարդակում քաղաքականության մշակման գործընթացը ավելի համարժեք է, քան Ուկրաինայում և Վրաստանում:

Փաստարկված քաղաքականության իրականացում

Նոր օրենսդրական նախաձեռնությունների հնարավոր ազդեցությունը գնահատելու հիմնական վերլուծական տեխնիկայի և գործիքակազմի առկայությունն ու կիրառությունը՝ Հայաստանին տրվել է 2 հնարավորից 2 գնահատականը, Ուկրաինային՝ 2, Վրաստանին՝ 1:

Նախքան քաղաքականության հաստատումը բյուջետային ազդեցության գնահատման առկայությունն ու կիրառությունը՝ Հայաստանին տրվել է 3 հնարավորից 3 գնահատականը, Ուկրաինային և Վրաստանին՝ 1:

Կարգավորիչ ազդեցության գնահատման առկայությունն ու կիրառությունը՝ Հայաստանին տրվել է 3 հնարավորից 2 գնահատականը, Ուկրաինային՝ 1, Վրաստանին՝ 0:

Ազդեցության գնահատման որակի վերահսկում՝ Հայաստանին տրվել է 3 հնարավորից 2 գնահատականը, Ուկրաինային՝ 2, Վրաստանին՝ 0:

Ազդեցության գնահատման վերլուծության որակը՝ Հայաստանին տրվել է 15 հնարավորից 4 գնահատականը, Ուկրաինային՝ 0, Վրաստանին՝ 1:

Փաստարկված քաղաքականության իրականացման տեսանկյունից Հայաստանում առկա են օրենսդրական նախաձեռնությունների հնարավոր ազդեցության գնահատման հիմնական գործիքակազմը և դրա կիրառության պրակտիկան. այս ուղղությամբ Հայաստանը գերազանցում է Վրաստանին: Հայաստանում պարզաճ ձևով գնահատվում են նաև որոշումների նկատմամբ բյուջետային ու կարգավորիչ ազդեցությունները: Վրաստանի և Ուկրաինայի համեմատ ալելի բարձր է նաև ազդեցության գնահատման վերլուծության և դրա նկատմամբ վերահսկողության որակը: Սա նշանակում է, որ Հայաստանում որոշումները կայացվում են հիմնականում փաստարկված, հիմնված ալելի լուրջ հաշվարկների, ռիսկերի գնահատման վրա:

Պետական քաղաքականության վերաբերյալ հանրային խումներ

Հանրային քննարկումների արդյունավետ գործընթացը կարգավորող դաշտի համարժեքություն՝ Հայաստանին տրվել է 10 հնարավորից 9 գնահատականը, Ուկրաինային՝ 9, Վրաստանին՝ 0:

Հանրային քննարկումների գործընթացի որակի ապահովում՝ Հայաստանին տրվել է 3 հնարավորից 1 գնահատականը, Ուկրաինային՝ 1, Վրաստանին՝ 0:

Օրենքների նախագծերի հրապարակման կարգավորումները՝ գրավոր հանրային քննարկումների նպատակով՝ Հայաստանին տրվել է 4 հնարավորից 1 գնահատականը, Ուկրաինային՝ 1, Վրաստանին՝ 0:

Հանրային քննարկումների պրակտիկ կիրառումը՝ Հայաստանին տրվել է 24 հնարավորից 10 գնահատականը, Ուկրաինային՝ 3, Վրաստանին՝ 0:

Հայաստանում պետական քաղաքականության վերաբերյալ հանրային խումների տեսանկյունից առկա են այդ գործընթացն ապահովող համարժեք կարգավորումներ,

իսկ հանրային քաննարկումների որակի առումով մեզ մոտ իրավիճակը ավելի լավ է, քան Վրաստանում: Նույնը կարելի է ասել օրենքների նախագծերի հրապարակման և գրավոր հանրային քննարկումների դեպքում: Հանրային քննարկումների պրակտիկայի կիրառման առումով Հայաստանը զգալիորեն առաջ է ինչպես Վրաստանից, այնպես էլ Ուկրաինայից: Սա նշանակում է, որ Հայաստանում նախքան կարևոր որոշումների կայացումը հանրային քննարկումների անցկացմանը ավելի մեծ ուշադրություն է դարձվում, ինչը մեծացնում է այդ որոշումների լեգիտիմությունը:

Պետական քաղաքականության վերաբերյալ միջգերատեսչական քննարկումները

Արդյունավետ միջգերատեսչական հանրային քննարկումների համար կարգավորումների շրջանակի համարժեքությունը՝ Հայաստանին տրվել է 9 հնարավորից 9 գնահատականը, Ուկրաինային՝ 5, Վրաստանին՝ 5:

Միջգերատեսչական քննարկումների պրակտիկ կիրառումը՝ Հայաստանին տրվել է 12 հնարավորից 12 գնահատականը, Ուկրաինային՝ 9, Վրաստանին՝ 0:

Պետական քաղաքականության վերաբերյալ միջգերատեսչական քննարկումները Հայաստանում ավելի լավ են կարգավորված, քան Վրաստանում և Ուկրաինայում: Դրա համար ոչ միայն առկա են համարժեք կարգավորումները, այլև ձևավորված է միջգերատեսչական քննարկումների պրակտիկան: Այս ցուցանիշները վկայում են, որ Հայաստանում որոշումների կայացման գործընթացը ավելի կոլեկտիվ բնույթ է կրել, քան նույն Ուկրաինայում և Վրաստանում, և այն տեսակետը, թե մինչև իշխանափոխությունը ՀՀ-ում որոշումները կայացվել են միայն մեկ կամ մի քանի անձանց կողմից, չեն համապարասխանում իրականությանը:

Օրենսդրության կանխարեսելիությունն ու կայունությունը

Օրենսդրական նախագծերի կազմման համար ուղեցույց հանդիսացող փաստաթղթերի առկայությունը՝ Հայաստանին տրվել է 2 հնարավորից 2 գնահատականը, Ուկրաինային՝ 2, Վրաստանին՝ 1:

Ընդունվելուց մեկ տարի անց փոփոխված օրենքների քանակը՝ Հայաստանին տրվել է 3 հնարավորից 3 գնահատականը, Ուկրաինային՝ 0, Վրաստանին՝ 0:

Բիզնեսի կողմից կառավարության քաղաքականության մշակման պարզության և կայունության ընկալումը՝ Հայաստանին տրվել է 2 հնարավորից 1 գնահատականը, Ուկրաինային՝ 0, Վրաստանին՝ 1:

Հայաստանում օրենսդրությունն ավելի կանխատեսելի և կայուն է, առկա են օրենսդրական նախագծերի կազմման համար ուղեցույց հանդիսացող փաստաթղթեր, ընդունված օրենքների փոփոխման ավելի ճկուն համակարգ, իսկ բիզնեսի կողմից կառավարության օրենսդրական գործունեությունը ավելի ընկալելի ու պարզ է, քան, օրինակ, Ուկրաինայում:

Օրենսդրության հասանելիությունը

Օրենսդրության հանրային հասանելիությունն ապահովող կարգավորումների շրջանակի համարժեքությունը՝ Հայաստանին տրվել է 6 հնարավորից 6 գնահատականը, Ուկրաինային՝ 5, Վրաստանին՝ 6:

Հայաստանում առկա են հանրության համար օրենսդրության հասանելիությունն ապահովող անհրաժեշտ կարգավորումները:

3. ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱԴՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Այս ոլորտներում հնարավոր է համադրել Ուկրաինայի և Հայաստանի վերաբերյալ գնահատականները: Այսպես, Հայաստանը Ուկրաինայի համեմատ ավելի բարձր գնահատականներ է ստացել հետևյալ ուղղություններով՝

Պետական ծառայության ոլորտում մարդկային ռեսուրսի պրոֆեսիոնալ կառավարման քաղաքականության, իրավական դաշտի և ինստիտուցիոնալ շրջանակի համարժեքությունը

Քաղաքացիական ծառայության համար քաղաքական պատասխանատվության սահմանումը՝ Հայաստանին տրվել է 2 հնարավորից 2 գնահատականը, Ուկրաինային՝ 0:

Այսինքն՝ քաղաքացիական ծառայության համար Հայաստանում սահմանված է ավելի բարձր քաղաքական պատասխանատվության մակարդակ, քան Ուկրաինայում:

Քաղաքացիական ծառայողների հավաքագրման արդյունավետությունն ու արդարության սկզբունքի պահպանումը

Քաղաքացիական ծառայության պաշտոններում ընդունվելու սահմանված կարգի փաստացի կիրառությունը՝ Հայաստանին տրվել է 17 հնարավորից 9 գնահատականը, Ուկրաինային՝ 18 հնարավորից՝ 4:

Նոր ընդունված աշխատողներին պահելու մակարդակը՝ Հայաստանին տրվել է 4 հնարավորից 4 գնահատականը, Ուկրաինային՝ 2:

Ուկրաինայի համեմատությամբ՝ Հայաստանում քաղաքացիական ծառայողների ընդունելության համար սահմանված կարգը ավելի լավ է կիրառվում, իսկ նոր ընդունված աշխատակիցները պաշտոնավարելու ավելի երկար ժամանակ են ստանում: Փաստորեն, Հայաստանում քաղաքացիական ծառայողների ընտրության և պաշտոնավարման մեխանիզմները ավելի կայացած են՝ չնայած բազմաթիվ քննադատություններին: Պատահական չէ, որ երկրում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո մի շարք պետական հիմնարկներում աշխատակիցների մեծամասնությունը չի փոփոխվել:

Քաղաքացիական ծառայողների աշխատանքից հեռացման և պաշտոնի իջեցման հարցում արդարության սկզբունքի պահպանումը

Դատարանի կողմից հաստատված հեռացման որոշումներ՝ Հայաստանին տրվել է 4 հնարավորից 2 գնահատականը, Ուկրաինային՝ 0:

Աշխատանքից ազատված քաղաքացիական ծառայողներին ձեռնտու դատական որոշումների կատարումը՝ Հայաստանին տրվել է 4 հնարավորից 4 գնահատականը, Ուկրաինային՝ 2:

Սա նշանակում է, որ Հայաստանում քաղաքացիական ծառայողների աշխատանքից հեռացման գործընթացը ավելի տրամաբանական ու պարզառարարական է, դրանք հիմնականում հաստատվում են դատարանի կողմից, իսկ քաղաքացիական ծառայողի իրավունքների խախտման պարագայում դատարանի ընդունած որոշումները՝ հոգուր վերջինիս, հիմնականում կատարվում են:

Բարձրաստիճան քաղաքացիական ծառայողներին աշխատանքի ընդունման և աշխատանքից ազատման ժամանակ արդարության սկզբունքի պահպանումը

Պաշտոնի իջեցման կամ պաշտոնազրկման ժամանակ բարձրաստիճան քաղաքացիական ծառայողների իրավունքների օրենսդրական պաշտպանությունը՝ Հայաստանին տրվել է 2 հնարավորից 2 գնահատականը, Ուկրաինային՝ 1:

Հայաստանում ավելի լավ են պաշտպանված նաև բարձրաստիճան քաղաքացիական ծառայողների իրավունքները, եթե նույնիսկ վերջիններս զրկվում են պաշտոնից:

Քաղաքացիական ծառայողների համար վարձարության համակարգի արդարությունն ու մրցունակությունը

Աշխատավարձի իրավական սահմանումների, բաշխման չափորոշիչների և ընթացակարգերի համակողմանիությունը, հստակությունն ու թափանցիկությունը՝ Հայաստանին տրվել է 2 հնարավորից 2 գնահատականը, Ուկրաինային՝ 0:

Թեև քաղաքացիական ծառայողների աշխատավարձերի մրցունակության առումով Հայաստանում վիճակը այնքան էլ բարվոք չէ, ինչը ուղղակիորեն կապված է երկրի տնտեսական հնարավորությունների հետ, սակայն աշխատավարձի արդարացի բաշխվածության, թափանցիկության տեսանկյունից Հայաստանն ավելի լավ վիճակում է գտնվում, քան Ուկրաինան:

Քաղաքացիական ծառայողների մասնագիտական զարգացումն ու թրեյնինգները

Քաղաքացիական ծառայողների ուղղահայաց առաջխաղացման գործում քաղաքական միջամտության բացակայությունը՝ Հայաստանին տրվել է 2 հնարավորից 2 գնահատականը, Ուկրաինային՝ 0:

Պետական հատվածում արդարության սկզբունքի ընկալման մակարդակը՝ Հայաստանին տրվել է 5 հնարավորից 5 գնահատականը, Ուկրաինային՝ 3:

Ի տարբերություն Ուկրաինայի՝ Հայաստանում քաղաքացիական ծառայողների ուղղահայաց առաջխաղացման գործում քաղաքական միջամտությունների պրակտիկան այնքան էլ տարածված չէ, իսկ պետական հատվածում կադրային քաղաքականության նկատմամբ արդարության սկզբունքի պահպանումը ավելի դրական ընկալում ունի:

Քաղաքացիական ծառայողների համար նախատեսված կարգապահական գործընթացների որակը

Դատարանների կողմից հաստատված կարգապահական որոշումներ՝ Հայաստանին տրվել է 4 հնարավորից 4 գնահատականը, Ուկրաինային՝ 2:

Քաղաքացիական ծառայողների վերաբերյալ կարգապահական որոշումները հիմնականում հաստատվում են դատարանի կողմից, ինչը նշանակում է, որ հիմնականում այդ որոշումները կատարվում են օրինական հիմքերով:

Քաղաքացիական ծառայողների ազնվությունը

Պետական հատվածի ազնվությանը միտված քաղաքականության և գործողությունների համընդգրկուն ծրագրի առկայություն՝ Հայաստանին տրվել է 4 հնարավորից 2 գնահատականը, Ուկրաինային՝ 0:

Քիզնեսի կողմից պետական հատվածում կոռուպցիայի բացակայության ընկալման մակարդակը՝ Հայաստանին տրվել է 4 հնարավորից 4 գնահատականը, Ուկրաինային՝ 2:

Քաղաքացիների կողմից պետական հատվածում կոռուպցիայի բացակայության ընկալման մակարդակը՝ Հայաստանին տրվել է 4 հնարավորից 3 գնահատականը, Ուկրաինային՝ 0:

Նշված ցուցանիշները ցույց են տալիս, որ Հայաստանում առկա են քաղաքացիական ծառայողների ազնվության մակարդակի բարձրացմանը միտված ավելի բարենպաստ քաղաքականություն և ծրագրեր: Քիզնեսի կողմից պետական հատվածում կոռուպցիայի բացակայության վերաբերյալ ավելի դրական ընկալում կա, քան քաղաքացիների կողմից, սակայն երկու դեպքում էլ Հայաստանում ընկալումն ավելի լավ է, քան Ուկրաինայում:

4. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կառավարության հաշվետվողականության ոլորտներում հնարավոր է համադրել Հայաստանի և Ուկրաինայի վերաբերյալ գնահատականները: Հայաստանը Ուկրաինայի համեմատ ավելի բարձր գնահատականներ է ստացել հետևյալ ուղղություններով.

Կառավարության կազմակերպվածությունն ու հաշվետվողականությունը

Կարգավորիչ և օրենսդրական շրջանակներում կառավարման հաշվետվողականության մեխանիզմների առկայությունը՝ Հայաստանին տրվել է 5 հնարավորից 4 գնահատականը, Ուկրաինային՝ 3:

Հայաստանում կառավարման հաշվետվողականության համար առկա են ավելի լավ մեխանիզմներ, քան Ուկրաինայում:

Հանրային տեղեկատվության մատչելիություն

Հանրային տեղեկատվության հասանելիության ընկալումը բնակչության կողմից՝ Հայաստանին տրվել է 2,5 հնարավորից 1,5 գնահատականը, Ուկրաինային՝ 1:

Հանրային տեղեկատվության հասանելիության ընկալումը բիզնեսի կողմից՝ Հայաստանին տրվել է 2,5 հնարավորից 2,5 գնահատականը, Ուկրաինային՝ 1,5:

Այս գնահատականները ցույց են տալիս, որ կառավարության գործունեության և վերջինիս կողմից իրականացվող քաղաքականության մասին հանրային տեղեկատվությունը ավելի հասանելի է թե՛ բիզնեսի, թե՛ քաղաքացիների համար: Սա կառավարության գործունեության թափանցիկության ևս մեկ ցուցիչ է:

Անկախ վերահսկող հաստատությունների կողմից պետական մարմինների նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը

Օմբուդսմենի ինստիտուտի անկախության և համարժեք մանդատի համար օրենսդրական երաշխիքները՝ Հայաստանին տրվել է 10 հնարավորից 10 գնահատականը, Ուկրաինային՝ 7:

Բնակչության կողմից վերահսկող ինստիտուտների անկախությունը ընկալումը՝ Հայաստանին տրվել է 5 հնարավորից 2 գնահատականը, Ուկրաինային՝ 0:

Բնակչության կողմից վերահսկող ինստիտուտների նկատմամբ վստահությունը՝ Հայաստանին տրվել է 5 հնարավորից 2 գնահատականը, Ուկրաինային՝ 0:

Վերսահակողական ինստիտուտների և քաղաքացիների կողմից կառավարության՝ հաշվետվողականությունը վերահսկելու ունակության ընկալումը՝ Հայաստանին տրվել է 5 հնարավորից 3 գնահատականը, Ուկրաինային՝ 6 հնարավորից՝ 0:

Ուկրաինայի համեմատ, Հայաստանում օմբուդսմենի ինստիտուտի անկախության համար առկա են ավելի բարձր օրենսդրական երաշխիքներ: Բնակչությունը վերահսկողական ինստիտուտների նկատմամբ ավելի մեծ վստահություն ունի և ավելի շատ է հավատում դրանց անկախությանը, ինչպես նաև կառավարությանը հաշվետու պահելու դրանց կարողությանը:

Վարչական դատական վեճերի լուծման անաչառությունը և հանրային պատասխանատվության ռեժիմի արդյունավետությունը

Բնակչության կողմից դատական համակարգի անկախության ընկալումը՝ Հայաստանին տրվել է 5 հնարավորից 2 գնահատականը, Ուկրաինային՝ 0:

Հանրային պատասխանատվության մեխանիզմի գործնական կիրառումը դատարանների կողմից՝ Հայաստանին տրվել է 3 հնարավորից 2 գնահատականը, Ուկրաինային՝ 0:

Փաստորեն, ՀՀ ներկայիս իշխանությունների հավաստիացումները, թե իբր դատական համակարգը Հայաստանում անկախ չէ, և բնակչության մեծամասնությունը չի վստահում դատական համակարգին, չեն համապատասխանում իրականությանը: Իհարկե, 5-ից 2 գնահատականը խոսում է դատական համակարգի անկախության նկատմամբ որոշակի անվստահության մասին, սակայն այս տեսանկյունից Հայաստանը գտնվում է ավելի լավ վիճակում, քան հետիեղափոխական Ուկրաինան, որտեղ 2014 թվականից ի վեր «դատական բարեփոխումներ» են իրականացվում՝ այդ թվում Արևմուտքի նկատմամբ «աջակցությամբ»: Ի դեպ, դատական համակարգի անկախության ընկալումը հանրության շրջանում ՀՀ-ում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո ոչ թե բարելավվել է, այլ ավելի շատ հարցեր է առաջացրել՝ կապված հայտնի գաղտնալսումների, երկրի ղեկավարների կողմից դատարանները շրջափակելու և ենթարկեցնելու փորձերի հետ: Ինչ վերաբերում է նախատեսվող «բարեփոխումներին», ապա նույն Ուկրաինայի վերաբերյալ գնահատականները պետք է ազդակ հանդիսանան, որ դրանք առնվազն չեն հանգեցնելու դատական համակարգի անկախության մակարդակի ավելացմանը:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՈՒՄ

Ծառայությունների մատուցման ոլորտներում հնարավոր է համադրել Հայաստանի և Ուկրաինայի վերաբերյալ գնահատականները: Հայաստանը՝ Ուկրաինայի համեմատ ավելի բարձր գնահատականներ է ստացել հետևյալ ուղղություններով՝

Ծառայությունների «քաղաքացիակենտրոն» մատուցում

Հանրային ծառայությունների մատուցման որակի ընկալումը քաղաքացիների կողմից՝ Հայաստանին տրվել է 6 հնարավորից 6 գնահատականը, Ուկրաինային՝ 2:

Անհատական նույնականացման փաստաթղթերի թարմացումը՝ Հայաստանին տրվել է 6 հնարավորից 1,5 գնահատականը, Ուկրաինային՝ 0:

Անձնական ավտոմեքենաների գրանցումը՝ Հայաստանին տրվել է 6 հնարավորից 1,5 գնահատականը, Ուկրաինային՝ 0:

Անձնական եկամտային հարկերի գրանցումն ու վճարումը՝ Հայաստանին տրվել է 6 հնարավորից 4 գնահատականը, Ուկրաինային՝ 1,5:

Քիզնեսի կողմից պետական ծառայության մատուցման և վարչական բեռների որակի ընկալումը՝ Հայաստանին տրվել է 6 հնարավորից 4 գնահատականը, Ուկրաինային՝ 1,5:

Քիզնես սկսելու հնարավորությունը՝ Հայաստանին տրվել է 6 հնարավորից 6 գնահատականը, Ուկրաինային՝ 4:

ԱԱՀ-ի հայտարարագրումն ու վճարումը՝ Հայաստանին տրվել է 6 հնարավորից 5 գնահատականը, Ուկրաինային՝ 4:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանում կառավարության կողմից քաղաքացիներին հանրային ծառայությունների մատուցման մակարդակը մի շարք ուղղություններով ավելի «քաղաքացիակենտրոն» է, քան Ուկրաինայում: Հայաստանում քաղաքացիների համար ստեղծված են ավելի բարենպաստ պայմաններ, հետևաբար հանրային ծառայությունների որակը քաղաքացիների կողմից ավելի դրական ընկալում ունի: Քաղաքացիների համար ավելի հարմար եղանակով են իրականացվում այնպիսի գործընթացները, ինչպիսիք են ավտոմեքենաների գրանցումը, ԱԱՀ-ի և եկամտահարկի գրանցումն ու վճարումը: Միաժամանակ, ավելի մեծ են բիզնես սկսելու հնարավորությունները, բիզնեսը ավելի դրական է գնահատում պետության կողմից ծառայությունների մատուցումը, իսկ վարչական բեռը ավելի ընդունելի է վերջինիս համար:

Ադմինիստրատիվ գործընթացների անաչառությունն ու արդյունավետությունը

Ընդհանուր կիրառման վարչական ընթացակարգերի վերաբերյալ օրենսդրության առկայությունը՝ Հայաստանին տրվել է 3 հնարավորից 3 գնահատականը, Ուկրաինային՝ 0:

Վարչական ընթացակարգերի վերաբերյալ օրենսդրության պատշաճ մակարդակ, որը թույլ է տալիս ապահովել արդյունավետ կառավարում՝ Հայաստանին տրվել է 7 հնարավորից 7 գնահատականը, Ուկրաինային՝ 1:

Քաղաքացիների կողմից հանրային հաստատություններում վարչական ընթացակարգերի արդյունավետության ընկալումը՝ Հայաստանին տրվել է 4 հնարավորից 2 գնահատականը, Ուկրաինային՝ 1:

Վարչական դատարանների կողմից վարչական մարմինների ընդունած որոշումների հաստատման կամ փոփոխության պրակտիկան՝ Հայաստանին տրվել է 4 հնարավորից 1 գնահատականը, Ուկրաինային՝ 0:

Ադմինիստրատիվ գործընթացների անաչառության ու արդյունավետության ոլորտում Հայաստանում, ի տարբերություն Ուկրաինայի, առկա է վարչական ընթացակարգերի ավելի համարժեք օրենսդրություն, քաղաքացիները վարչական ընթացակարգերը համարում են ավելի արդյունավետ, իսկ վարչական դատարանները համեմատաբար կաշկանդված չեն վարչական մարմինների որոշումների վերանայման հարցում:

Հանրային ծառայություն մատուցելու հնարավորությունների առկայությունը և ծառայությունների հասանելիությունը

Փոխգործակցության ենթակառուցվածքների բավարար մակարդակի առկայությունը՝ Հայաստանին տրվել է 3 հնարավորից 1 գնահատականը, Ուկրաինային՝ 0,5:

Ծառայություններից օգտվողների ներգրավման գործիքների և տեխնիկայի կիրառումը՝ Հայաստանին տրվել է 4 հնարավորից 2 գնահատականը, Ուկրաինային՝ 1:

Կառավարության կայքէջերի համար ընդհանուր ուղեցույցների առկայությունը՝ Հայաստանին տրվել է 2 հնարավորից 1 գնահատականը, Ուկրաինային՝ 0:

Բնակչության գոհունակությունը հանրային ծառայություններից՝ ըստ տարածաշրջանների՝ Հայաստանին տրվել է 3 հնարավորից 2 գնահատականը, Ուկրաինային՝ 1:

Ծառայությունների մատուցման գների և ժամկետների ընկալումը բնակչության կողմից՝ Հայաստանին տրվել է 3 հնարավորից 0,5 գնահատականը, Ուկրաինային՝ 0:

Փաստորեն, Ուկրաինայի համեմատությամբ՝ ՀՀ-ում հանրային ծառայությունների մատուցման համար առկա են համեմատաբար բավարար մակարդակում գտնվող ենթակառուցվածքներ, ծառայությունների համար անհրաժեշտ գործիքներ և տեխնիկա, կառավարության կայքէջերի համար հիմնականում առկա են ընդհանուր ուղեցույցներ: Արդյունքում բնակչության գոհունակությունը հանրային ծառայություններից Հայաստանում ավելի մեծ է, իսկ ծառայությունների մատուցման ժամկետներն ու գները ավելի ընկալելի:

6. ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ՝ ՆԵՐԱՌՅԱԼ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԻԴԻՏԸ

Ի վերջո, Հայաստանի մասին զեկույցում առկա է նաև պետական ֆինանսների կառավարման՝ ներառյալ պետական գնումների և արտաքին աուդիտի ոլորտը, որը Ուկրաինայի և Վրաստանի պարագայում ուսումնասիրված չէ, իսկ Մոլդովայի դեպքում ուսումնասիրված է այլ մեթոդաբանությամբ: Պետք է նշել, որ այս ուղղությամբ Հայաստանը նույնպես ունի միջին ցուցանիշներ:

Ներկայացնենք Հայաստանի ցուցանիշները.

Բյուջեի կառավարում	
Միջնաժամկետ բյուջեի շրջանակի որակը	2/5
Տարեկան բյուջեի գործընթացի որակը և բյուջեի հուսալիությունը	3/5
Բյուջեի կատարման և հաշվետվողականության գործընթացի հուսալիությունը	4/5
Բյուջեի պարտքի կառավարման որակը	4/5
Բյուջեի հաշվետվությունների և քննարկման թափանցիկությունը և ընդգրկվածությունը	3/5
Ներքին վերահսկողություն և աուդիտ	
Գործնականում ներքին հսկողության և դրա գործառնական շրջանակի համարժեքությունը	1/5
Գործնականում ներքին աուդիտի և դրա գործառնական շրջանակի համարժեքությունը	2/5
Պետական գնումներ	
Պետական գնումների և ՊՄԳ-ների օրենսդրական դաշտի որակը	3/5
Կենտրոնական ինստիտուցիոնալ և վարչական կարողություններ՝ պետական գնումների քաղաքականությունը արդյունավետ կերպով մշակելու, իրականացնելու և վերահսկելու համար	2/5
Բողոքների վարման համակարգի անկախությունը, ժամկետայնությունը և իրազեկվածությունը	2/5

Պետական գնումների գործողություններում կիրառվող պրակտիկայի արդյունավետությունը, խտրականության բացակայությունը, թափանցիկությունը և հավասար վերաբերմունքը	1/5
Տնտեսական օպերատորների և գնող կազմակերպությունների համար հասանելիությունը և աջակցության որակի առկայությունը՝ գնման գործընթացների պրոֆեսիոնալությունն ամրապնդելու նպատակով	2/5
Արտաքին աուդիտ	
Բարձրագույն աուդիտի ինստիտուտի անկախություն	2/5
Արտաքին աուդիտի համակարգի արդյունավետություն	1/5

Ինչպես տեսնում ենք, պետական ֆինանսների կառավարման՝ ներառյալ պետական գնումների և արտաքին աուդիտի ոլորտներում նույնպես Հայաստանի պետական կառավարման համակարգը ստացել է միջին գնահատականներ: Թեև այլ երկրների հետ համեմատելու համար տվյալներ առկա չեն, սակայն ընդհանուր առմամբ որոշ ուղղություններով առկա են բավական լավ գնահատականներ: Մասնավորապես՝ բյուջեի կառավարման և հաշվետվողականության գործընթացի հուսալիությունը գնահատված է 4 միավորով, նույն գնահատականն է նաև բյուջեի պարտքի կառավարման որակի վերաբերյալ: Տարեկան բյուջեի գործընթացի որակը և բյուջեի հուսալիությունը, բյուջեի հաշվետվությունների քննարկման թափանցիկությունը և ընդգրկվածությունը, պետական գնումների և ՊՄԳ-ների օրենսդրական դաշտի որակը գնահատվել է 3 միավորով: Համեմատաբար նաև ցածր են գնումների ներքին և արտաքին աուդիտի վերաբերյալ գնահատականները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մենք անդրադարձել ենք միայն այն գնահատականներին, որոնցում Հայաստանը առավելություն ունի համեմատության մեջ գտնվող մյուս երկրների նկատմամբ: Սա չի նշանակում, որ մյուս ոլորտներում մեր կառավարման համակարգը ակնհայտորեն զիջում է համեմատության մեջ գտնվող երկրներին. նշվածից բացի, մյուս ցուցանիշներով Հայաստանը հիմնականում ստացել է այդ երկրներին տրված գնահատականներին համարժեք գնահատականներ:

Ընդհանուր առմամբ SIGMA-ի զեկույցը ցույց է տալիս, որ Հայաստանում պետական ինստիտուտները գտնվում են թեև ոչ կարարյալ, սակայն բավական կայացած վիճակում: Քանի որ զեկույցի շրջանակներում ընդգրկվում են 2017-2018 թվականները, հաշվի է առնվել թե՛ նախորդ, թե՛ ներկայիս իշխանությունների կառավարման ժամանակահատվածների ընդհանուր պարկերը, հետևաբար դժվար է զեկույցը կողմնակալ կամ ոչ հավաստի համարել: Ընդ որում, քանի որ այս

իշխանությունների հոչակած «բարեփոխումները» դեռևս արդյունքներ չեն գրանցել, իսկ նախորդ կառավարության նախաձեռնած մի շարք կարևոր բարեփոխումների շարունակականությունը չի ապահովվել, զեկույցի հեղինակները շար դեպքերում բարեփոխումների անկատարության հետ կապված որոշ ոլորտներին գնահատականներ չեն տվել:

Զեկույցի գնահատականները հիմնականում վերաբերում են տարիների ընթացքում կայացած պետական կառավարման համակարգին, որը ինչպես տեսնում ենք, մի շարք ուղղություններում շար ավելի բարվոք վիճակում է գտնվում, քան Վրաստանի, Ուկրաինայի կառավարման համակարգերը: Ավելին, այդ համակարգի կայացածության մասին են խոսում Հայաստանում տեղի ունեցած այնպիսի իրադարձությունները, ինչպիսիք էին Ապրիլյան պատերազմը, երկրում ահաբեկչական գործունեության փորձերը, 2018թ. իշխանափոխությունը և դրան հաջորդած իրադարձությունները: Չնայած այդ ճգնաժամային իրադարձություններին՝ կառավարման համակարգը պահպանել է իր կայունությունը և ընդհանուր առմամբ պետական ապարատի բնականոն գործունեության շարունակականությունը:

Ավելին, 2018թ. իշխանափոխությունից հետո, պետական կառավարման համակարգի գրեթե բոլոր ինստիտուտները շարունակեցին գործել, որն է ոլորտում փլուզում տեղի չունեցավ, համակարգի տասնամյակների ընթացքում ձևավորված կադրային բազան շարունակեց իր գործունեությունը՝ հարկապես կառավարման համակարգի միջին և վերին օղակներում: Ինքը՝ վարչապետ Փաշինյանն է պարբերաբար նշում, որ պետական կառավարման համակարգի աշխատակիցների 90%-ը նախկին իշխանությունների օրոք աշխատած անձինք են: Ավելին, նախկին իշխանությունների օրոք կարևոր պաշտոններ զբաղեցրած անձինք այսօր ղեկավարում են այնպիսի առանցքային ոլորտներ, ինչպիսիք են պաշտպանության նախարարությունը, ազգային անվտանգության ծառայությունը, ոստիկանությունը, արտաքին գործերի նախարարությունը, արտակարգ իրավիճակների նախարարությունը, ֆինանսների նախարարությունը, կենտրոնական բանկը և այլն: Այս բոլոր անձինք իրենց գիտելիքներն ու փորձը ձեռք են բերել նաև կայացած պետական համակարգում երկարամյա աշխատանքի շնորհիվ:

ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ

1. <http://www.sigmaweb.org/publications/Baseline-Measurement-Armenia-2019.pdf>
2. <http://www.sigmaweb.org/publications/Baseline-Measurement-Report-2018-Ukraine.pdf>
3. <http://www.sigmaweb.org/publications/Baseline-Measurement-Report-2018-Georgia.pdf>
4. <http://www.sigmaweb.org/publications/Baseline-Measurement-Moldova-2015.pdf>

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: